Co-funded by the European Union

Erasmus+ QA4VET

QA4VET ՆԱԽԱԳԾԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՄՇԱԿՎԱԾ ՄԿՈՒ ՓՈՐՁՆԱԿԱՆ (MOCK) ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

Կազմակերպություն- Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ)

Ներկայացնող՝ Անահիտ երտերյան, ՈԱԱԿ ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ

Ամիս, ամսաթիվ- Հայաստան, Երևան, 13-ը հուլիսի, 2026թ

Implementing partners:

aracip

involas
Institute for Vocational Education and Training, Labour Market and Social Policy

2 ՔՈԼԵՋ

ANQA
NATIONAL CENTER FOR PROFESSIONAL EDUCATION QUALITY ASSURANCE FOUNDATION

ACEP

Ի՞նչ է փորձնական (Mock) հավատարմագրումը

Համակարգային, ուսումնառությանն ուղղված որակի ապահովման գործընթաց է, որն աջակցում է ՄԿՈՒ հաստատություններին զարգացնելու և ամրապնդելու իրենց ներքին որակի ապահովման համակարգերը՝ ապացույցահեն ինքնավերլուծության և կարողությունների զարգացման միջոցով:

Ինստիտուցիոնալ ուսումնառություն

Ուժեղ և բարելավման ենթակա կողմերի, ինչպես նաև զարգացման առաջնահերթությունների վերաբերյալ միասնական պատկերացման ձևավորում:

Որակի ներքին ապահովման համակարգի կարողությունների զարգացում

Ինքնավերլուծության, ապացույցների հավաքագրման և վերլուծական ինքնավերլուծության կարողությունների զարգացում:

Որակի մշակույթի զարգացում

Խթանում է վերլուծական մտածողությունը, մասնագիտական երկխոսությունը և որակի նկատմամբ համատեղ պատասխանատվությունը:

Ի՞ՆՉ Է ՓՈԽՎՈՒՄ ՄԿՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1

Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում

Հաստատությունը սովորում է վերլուծել սեփական գործունեությունը և բարելավել սեփական աշխատանքը:

2

Մասնագիտական երկխոսություն

Ղեկավարությունը, դասախոսները, գործատուները և այլ շահակիցներ միասին քննարկում են կրթության որակին առնչվող հարցերը և համատեղ որոնում լուծումներ:

3

Համատեղ պատասխանատվություն

Որակի ապահովումը դադարում է լինել միայն ՈՆԱ պատասխանատուի կամ ղեկավարության գործառույթը և դառնում է ամբողջ հաստատության ընդհանուր պատասխանատվությունը:

4

Ապացույցների վրա հիմնված որոշումներ

Որոշումները կայացվում են ոչ թե ենթադրությունների, այլ հավաքագրված տվյալների, փաստերի վերլուծության արդյունքների հիման վրա:

5

Շարունակական բարելավում

Բացահայտված խնդիրները վերածվում են բարելավման գործողությունների, որոնց իրականացումը պարբերաբար գնահատվում և վերանայվում է:

6

Որակի մշակույթ

Որակի ապահովումը դառնում է հաստատության ամենօրյա գործունեության բնականոն մասը և նպաստում է շարունակական զարգացմանը:

ՓՈՐՁՆԱԿԱՆ (MOCK) ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

1 **Ինքնավերլուծություն** — 2 Փորձագետների ընտրություն — 3 Հավատարմագրման այց — 4 Փորձագիտական զեկույց — 5 Բարելավման պլան

Ինքնավերլուծության շրջանակի ընտրություն

1

Ինքնավերլուծության իրականացում ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշների շրջանակում:

ՈՆԱ թիմի ձևավորում

2

9-ը ուսումնական հաստատություններում ձևավորվել են 6-8 հոգանոց ՈՆԱ թիմեր:

Կարողությունների զարգացում

3

- Կրթական ծրագրերի քարտեզագրում՝ վերջնարդյունքների, դասավանդման, գնահատման և ռեսուրսների համապատասխանության տեսանկյունից:
- Ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների մեկնաբանում և քննարկում՝ ՄԿՈՒ դեպքերի հիման վրա:
- Տվյալահենք SWOT վերլուծության մեթոդաբանության ներկայացում:
- ՈԱԱԿ-ի մեկ համակարգողի շարունակական մեթոդական աջակցություն յուրաքանչյուր հաստատության համար:
- Հաստատությունների SWOT վերլուծությունների քննարկում, վերանայում և բարելավում՝ հետադարձ կապի հիման վրա:

ԿԱՁՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՄՈՏ 15 ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ:

ՓՈՐՁՆԱԿԱՆ (MOCK) ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

1 Ինքնավերլուծություն
2 **Փորձագետների ընտրություն**
3 Հավատարմագրման այց
4 Փորձագիտական զեկույց
5 Բարելավման պլան

1

Ներքին փորձագետների ընտրություն

Յուրաքանչյուր ՄԿՈՒ հաստատությունից ընտրվել են 2 ներքին փորձագետներ:

2

Նախապատրաստական աշխատանքներ

Ընտրված փորձագետների հետ ՈԱԱԿ-ի համակարգողները քննարկել են SWOT վերլուծությունները և մշակել արդյունքահենք հարցեր՝ շահակիցների հետ հանդիպումների ընթացքում քննարկելու նպատակով:

3

Անկախ և օբյեկտիվ գնահատում

Փորձագետները SWOT վերլուծությունը գնահատել օբյեկտիվ և քննադատական տեսանկյունից՝ ժամանակավորապես մի կողմ դնելով իրենց մասնագիտական դերերը տվյալ հաստատությունում:

ՓՈՐՁՆԱԿԱՆ (MOCK) ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

1 Ինքնավերլուծություն
2 Փորձագետների ընտրություն
3 **Հավատարմագրման այց**
4 **Փորձագիտական զեկույց**
5 Բարելավման պլան

Փորձնական (Mock) հավատարմագրման այց

3

- Հանդիպումներ ղեկավարության, ծրագրերի պատասխանատուների, դասախոսների, ուսանողների, գործատուների և ՈՆԱ թիմի հետ:
- Շահակիցների հետ քննարկվում են SWOT վերլուծությունների հիման վրա ձևավորված հիպոթեզները:
- Այցի ավարտին փորձագետները ներկայացնում են բանավոր հետադարձ կապ՝ հիմնական դիտարկումներով և նախնական եզրահանգումներով:

Փորձագիտական զեկույց

4

- Ուժեղ կողմերի ներկայացում:
- Բարելավման ենթակա կողմերի ներկայացում:
- Բարելավմանն ուղղված իրատեսական խորհրդատվությունների տրամադրում:

ՓՈՐՁՆԱԿԱՆ (MOCK) ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

1 Ինքնավերլուծություն
2 Փորձագետների ընտրություն
3 Հավատարմագրման այց
4 Փորձագիտական զեկույց
5 **Բարելավման պլան**

Բարելավման պլան

1

Բարելավման ծրագրի մշակում՝ փորձագիտական խորհրդատվությունների հիման վրա:

Իրականացում և զարգացում

2

Բարելավման գործողությունների իրականացում և շարունակական զարգացում:

Փուլերի շրջանը կրկնվում է. բարելավումից հետո հաստատությունը վերսկսում է նոր ինքնավերլուծությամբ՝ ապահովելով որակի շարունակական զարգացումը:

Հիմնական դերեր և պատասխանատվություն

Փորձնական (Mock) հավատարմագրման գործընթացը նախագծող, առաջնորդող և կայուն զարգացումն ապահովող դերակատարները

ՈՄԱ թիմ

Ինստիտուցիոնալ զարգացման շարժիչ ուժ

- Ղեկավարում է SWOTվերլուծության գործընթացը:
- Հավաքագրում, քարտեզագրում և վերլուծում է ապացույցները:
- Համակարգում է շահակիցների ներգրավվածությունը:
- Կոորդինացնում է բարելավման պլանի մշակումը և հետագա մշտադիտարկումը:

ՈԱԱԿ

Ուսումնառությունը խթանող

- Իրականացնում է ՈՆԱ թիմերի և ներքին փորձագետների կարողությունների զարգացում:
- Համակարգում է գործընթացի ընդհանուր իրականացումն ու ժամանակացույցը:
- Ապահովում է գնահատող և զարգացմանն ուղղված մոտեցումների պահպանումը գործընթացի բոլոր փուլերում:

Հաստատության ղեկավարություն

Ինստիտուցիոնալ փոփոխությունների առաջնորդ

- Պաշտոնապես հաստատում է գործընթացի իրականացումը և ձևավորում ՈՆԱ թիմը:
- Ապահովում է անհրաժեշտ ժամանակային, մարդկային և նյութական ռեսուրսները:
- Մասնակցում է գործընկերային գնահատման այցին և հետադարձ կապի քննարկմանը:
- Գնահատման արդյունքները ներառում է ռազմավարական և կառավարման որոշումների կայացման գործընթացում:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Թեմատիկ գնահատման մոտեցում

Փորձնական հավատարմագրման թեմատիկան ընտրվում է ՄԿՈՒ հաստատության կարիքից ելնելով:

2. ՈՆԱ թիմ՝ որպես փոփոխությունների շարժիչ

Ձևավորվում է բազմաշահակից աշխատանքային թիմ, որը ոչ միայն մասնակցում է գործընթացին, այլ հետագայում դառնում է ներքին որակի ապահովման համակարգողը:

3.Սովորում են անելու ընթացքում

Կարողությունները ձևավորվում են ոչ թե աշխատաժողովները լսելով, այլ իրական ինքնավերլուծության գործընթացում՝ աշխատելով սեփական փաստաթղթերի, տվյալների և ապացույցների հետ:

4. Ներքին փորձագետների զարգացում

Հաստատության աշխատակիցները վերապատրաստվում են որպես գործընկերային գնահատողներ՝ ձևավորելով փորձագիտական կարողություններ, որոնք մնում են ՄԿՈՒ համակարգի ներսում:

5. Գործընկերային գնահատում և հայելային անդրադարձ (Mirror Reflection)

Գնահատումը հիմնված է գործընկերների կողմից տրվող մասնագիտական «հայելային անդրադարձի» վրա, որը օգնում է հաստատությանը նոր տեսանկյունից գնահատել սեփական գործունեությունը և բացահայտել զարգացման հնարավորությունները:

6. Կայունություն

Մոդելը կառուցված է այնպես, որ QA4VET ծրագրի ավարտից հետո հաստատությունը կարողանա ինքնուրույն շարունակել ինքնագնահատման, գործընկերային գնահատման և բարելավման գործընթացները:

Շարունակաբար զարգացող ՈՆԱ համակարգ

Փորձնական (Mock) հավատարմագրումը մեկանգամյա գործընթաց չէ. այն ինստիտուցիոնալ ուսումնառության կրկնվող ցիկլ է, որը նպաստում է որակի կայուն մշակույթի ձևավորմանը:

Կարողությունները ձևավորվում են հաստատության ներսում՝ ներքին շահակիցներին պատրաստելով որպես փորձագետներ, ինչը ներքին ռեսուրսների հաշվին ապահովում է որակի ապահովման համակարգի կայուն զարգացումը:

Funded by the European Union. Views and opinions expressed are however those of the author(s) only and do not necessarily reflect those of the European Union or the European Education and Culture Executive Agency. Neither the European Union nor the granting authority can be held responsible for them